



<i>Համարը</i>	ՀՕ-86-Ն	<i>Տեսակը</i>	Հիմնական
<i>Տիպը</i>	Օրենք	<i>Կարգավիճակը</i>	Գործում է
<i>Սկզբնաղբյուրը</i>	ՀՀՊՏ 2016.06.15/47(1227) Հոդ.549	<i>Ընդունման վայրը</i>	Երևան
<i>Ընդունող մարմինը</i>	ՀՀ Ազգային ժողով	<i>Ընդունման ամսաթիվը</i>	17.05.2016
<i>Ստորագրող մարմինը</i>	ՀՀ Նախագահ	<i>Ստորագրման ամսաթիվը</i>	13.06.2016
<i>Վավերացնող մարմինը</i>		<i>Վավերացման ամսաթիվը</i>	
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i>	15.12.2016	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>	

**☒ Օճանուցում**

Տե՛ս անցումային դրույթները:

**☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ**

**☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՕՐԵՆՔԸ ԴԵԴԵՐԻ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2016 թվականի մայիսի 17-ին

**ԴԵԴԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հոդված 6. Առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունը դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում

1. Առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում իրականացնում է՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը դեղերի շրջանառության ոլորտում.

2) իր իրավասության շրջանակներում դեղերի շրջանառության կարգավորում.

3) դեղերի շրջանառության ոլորտի՝ օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորում և օրենքով սահմանված վերահսկողություն.

4) դեղերի պետական գրանցում.

5) դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպում և իրականացում.

6) դեղի գրանցման, պատշաճ արտադրական գործունեության, պատշաճ բաշխման գործունեության հավաստագրի տրամադրման համար և սույն օրենքով նախատեսված մասնագիտական այլ դիտարկումների ապահովում.

7) դեղերի գրանցամատյանի վարման ապահովում.

8) դեղերի արդյունավետ կիրառման և դեղերի կողմնակի ազդեցությունների մասնագիտական դիտարկման և համապատասխան երաշխավորությունների մշակման ապահովում.

9) միջազգային համագործակցություն.

10) միջգերատեսչական համագործակցություն.

11) դեղային պետական քաղաքականության ծրագրերի մշակում և դրանց իրականացման դիտարկում.

12) սույն օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված գործառույթներ:

Հոդված 29. Պետական վերահսկողությունը դեղերի շրջանառության ոլորտում

1. ~~Դեղերի շրջանառության ոլորտում օրենքով սահմանված պետական վերահսկողությունն իրականացնում է օրենքով լիազորված համապատասխան պետական կառավարման մարմինը:~~

1. Դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի որակը պետք է համապատասխանի սույն օրենքով սահմանված պահանջներին: